Ասլանը շնորհակալութիւն յայտնեց առաջնորդին եւ, հանելով ծոցից իր ոսկեայ ժամացոյցը, առաջարկեց նրան՝ ասելով.

— Դուք այնքան բարի էք, որ ես կը ցանկանայի թողնել ձեզ մօտ այդ փոքրիկ յիշատակը:

Երիտասարդը հրաժարոեցաւ կամ ձեւացրեց թէ հրաժարւում է, պատասխանելով.

— Շնորհակալ եմ ձեր ուշադրութեան համար, ես երբեք չէի կամենայ զրկել մի ճանապարհորդի իր ժամացոյցից, որը նրան շատ հարկաւոր կը լինի:

— Այդ իրաւ է, բայց համաձայնոեցէք, որ ճանապարհորդի ոսկեայ ժամացոյցը շատ հրապուրիչ բան է գողերի համար, ես կը ցանկանայի ազատոել դրանից: Ընդունեցէ՛ք, խնդրեմ, ես ունեմ եւ մի արծաթեայ ժամացոյց, այն էլ բաւական կը լինի ինձ համար:

Առաջնորդը շնորհակալութեամբ ընդունեց: Նրան անսովոր չէր՝ իր մատուցած ծառայութիւնների համար այս տեսակ «փեշքեշներ» ընդունել: Եթէ չտայինք, նա մինչեւ անգամ պահանջելու անամօթութիւն կունենար: Մանաւանդ փաշայի պատոի համար, որ մեզ հետ դրել էր իր ամենամօտ մարդիկներից մէկին, պէտք էր նրան որեւէ ընծայ տալ: Բայց այդ տեսակ ընծաները տալիս են այն ժամանակ, երբ ծառայութիւնները վերջացրած են լինում: Չգիտեմ՝ ինչո՞ւ շտապեց Ասլանը: Երեւի նրա համար, որ թուրք պաշտօնատարը չմտածէր, թէ իր ընծան աննշան բան կը լինի, այլ սկզբից ստանալով, աւելի եռանդով կը կատարէր իր յանձն առած ծառայութիւնը: Երիտասարդը հէնց նոյն րոպէում սկսեց տեղաւորել իր բաճկոնի վրայ ստացած ընծան. շղթան երբեմն դէպի կուրծքի աջ կողմն էր տանում, երբեմն դէպի ձախ կողմն էր տանում եւ մեծ մտածութեան մէջ էր, թէ ո՞ր կողմում աւելի գեղեցիկ կերեւայ: Նա դիմեց իմ խորհրդին, ես յայտնեցի իմ կարծիքը:

Ասլանը այդ միջոցին բարձրացել էր աշտարակներից մէկի գագաթի վրայ եւ այն ահեղ բարձրութիւնից երկար լուռ եւ տխուր կերպով նայում էր դէպի իր շրջակայքը: Նրա դէմքը նոյն րոպէում գունաթափ էր, աչքերի մէջ վառւում էր խորին տենդային կրակ, շրթունքները դողդողում էին, երեւի սիրտը սոսկալի խռովութեան մէջ էր: Ես բոլորովին ապշած կերպով նայում էի նրա վրա...

Մենք ցած իջանք բերդից միեւնոյն քարէ սանդուղքներով, որոնց մասին Ասլանը ասում էր, թէ մի ժամանակ Գագիկ Արծրունին է տաշել տոել, բայց այժմ համարեա թէ իսպառ մաշուած էին: Բերդի ստորոտում, մեր